

ԱԿՏԻՎԻԶՄԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Լինել ակտիվ
Մնալ ակտիվիստ



Հասարակական գործողություններից
դեպի ինստրիյուցիոնալ փոփոխություններ.
քննադատական և քաղաքականության երկխոսություն

Ակտիվիզմի Ուղեցույց

Լինել ակտիվ

Մնալ ակտիվիստ

Հասարակական գործողություններից
դեպի ինստիտուցիոնալ փոփոխություններ.
բնապահպանական քաղաքականության երկխոսություն





USAID
FROM THE AMERICAN PEOPLE



COUNTERPART
INTERNATIONAL



Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթեր-նեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիա-կան հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնոր-հիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության գործընկերային պայմանագ-րի շրջանակներում՝ **Հրայր Մարուխյան հիմնադրամի** միջոցով: Սույնի բովանդակու-թյունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին՝ **Հրայր Մարուխյան հիմնադրամին**, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

Բովանդակություն

Նախաբան.....	4
Բնապահպանական շարժում. առաջընթաց, խոչընդոտներ, հեռանկարներ.....	7
Առաջարկություններ.....	24
Վերջաբան.....	27
Գրականություն	31



Նախաբան

Չնայած նրան, որ ապրում ենք մի աշխարհում, որը լի է բռնությամբ, ճնշումներով և տարբեր այլ խնդիրներով, գոյություն ունի մեկ այլ իրականություն, որտեղ կա հսկայական ներուժ փոփոխության և լավ ապագա կերտելու համար: Իհարկե մենք չենք կարող վերափոխել աշխարհը մեկ օրում, բայց կարող ենք կարևոր քայլեր իրականացնել փոխելու այն՝ փորձելով լուծումներ գտնել մեր առջև ծառացած խնդիրներին. դուրս գալ ճնշման ծանրությունից, նվազեցնել բռնի կոնֆլիկտները, հասնել սոցիալական համերաշխության: Կարևոր է հասկանալ, որ գոյություն ունի այլընտրանք, ինչն էլ անընդմեջ պայքարն է՝ հասնելու շոշափելի փոփոխությունների: Սոցիալական շարժումների պրակտիկան շատ կարևոր է, այն ապացուցում է, որ պայքարի այս մեթոդը լայնորեն կիրառվել է և այսօր էլ դրական փոփոխությունների հասնելու համար արդյունավետ է: Դա միասնականությունն է, պատասխանատվությունը, վախն ու անվստահությունը հաղթահարելը և փոփոխության հասնելու հավատը, որն ամփոփված է մարդկային ուժի մեջ: Տարբեր սոցիալական շարժումների օրինակներ (Սերբիա, Բուրմա, Լեհաստան, ԱՄՆ) աշխարհի տարբեր անկյուններում ապացուցում են հասարակական համախմբվածության, հասարակական շարժման ուժը, որն ուղղված է հասարակական բոլոր խմբերի, անհատի արժանապատիվ, ազատ և խաղաղ ապրելու իրավունքի պայքարին: Ինչպես Պաուլո Ֆրեյրեն է նշում իր «Ճնշվածների մանկավարժություն» (Pedagogy of Oppressed) աշխատության մեջ. «Կոնֆլիկ-



տը միասնական կամ տարանջատված լինելու, ճնշողին ընդունելու կամ նրան մերժելու, մարդկային համերաշխության կամ օտարման, տրված դեղատոմսերին հետևելու կամ ընտրություն ունենալու, հանդիսատես կամ դերասան լինելու, ինքնուրույն գործելու կամ ճնշողի ազդեցությամբ գործելու, խոսելու կամ լռելու, իրենց իսկ ուժով ճնշված լինելու կամ այդ ուժով աշխարհը վերափոխելու մեջ է» (Ֆրեյբե, 1972):

Մարդու հիմնարար իրավունքներից է ապրել անվտանգ, մաքուր միջավայրում, ինչն առողջ հասարակության, միջավայրի և տնտեսության հիմք է հանդիսանում: Բնապահպանական խնդիրները, որոնք այսօր ծառացած են երկրագնդի վրա, ուղիղ հետևանքն են այն բանի, որ տարբեր երկրների տնտեսական զարգացումը հիմնված է եղել և մնում է այնպիսի քաղաքականության և ինստիտուտների ձևավորման վրա, որոնք նպաստում են միայն որոշ ուժերի շահույթ (գերշահույթ) ստանալուն, մինչդեռ հասարակությունը հանդիպում է խոչընդոտների, որոնք արգելք են հանդիսանում վերջինիս մասնակցությանը կարևոր բնապահպանական որոշումների կայացման գործընթացին:

Հայաստանում, սկսած անկախացումից, բնապահպանական շարժումները մեծ թափ ստացան, որի հիմնական նպատակն է եղել և մնում է մարդու և բնության՝ որպես փոխկապված միավորի, իրավունքների պաշտպանությունը (Թեղուտ, Թոչկան, Շիկահող, Քաջարան, Գառնի, Ջերմուկ):

«Հասարակական գործողություններից դեպի ինստիտուցիոնալ փոփոխություններ. բնապահպանական քաղաքականության երկխոսություն» ծրագրի շրջանակներում կազմակերպված երկու կլոր սեղան-քննարկումների նպատակն էր վերհանել այն խնդիրները, որոնք առկա են այսօր բնապահպանական շարժման գործունեության մեջ և խոչընդոտում են վերջինիս հասնել շոշափելի արդյունքների՝ ինստիտուցիոնալ փոփոխության: Կազմակերպված քննարկումներին մասնակցել են ակտիվիստներ, տարբեր բնապահպանական կազմակերպությունների ներկայացուցիչներ, լրագրողներ, փորձագետներ, ինչպես նաև բնապահպանական խնդիրների հետ առնչություն ունեցող նախարարությունների ներկայացուցիչներ: Տվյալ փաստաթուղթը և ստացված արդյունքները երկու կլոր սեղան-քննարկումների ամփոփումն է:

Քննարկումների ժամանակ ուրվագծվեցին բազմաթիվ գործոններ, որոնք խոչընդոտ են հանդիսանում բնապահպանական շարժման նպատակների իրագործման ճանապարհին: Մասնակիցների կողմից առաջարկվեցին նաև ուղիներ, որոնք արդյունավետ կդարձնեն շարժման գործունեությունը և կրերեն հնարավոր փոփոխությունների:

Բնապահպանական շարժում. առաջընթաց, խոչընդոտներ, հեռանկարներ

Մեր անդառնալի փորձից գիտենք,
որ ազատությունը երբևէ հենց այնպես
չի տրվում: Այն պահանջում են ճնշվածները:
Մարտին Լյութեր Քինգ, 1963

Սոցիալական շարժումները տարիներ շարունակ եղել են քաղաքական կյանքի մի մասը, որոնք նպաստում էին սոցիալական բարեփոխումների իրականացմանը, խտրականության, բռնության և այլ հիմնախնդիրների լուծմանը: Վերջին տարիներին նկատվել է սոցիալական շարժումների աճ, որոնք ոչ միայն բերել են քաղաքական և սոցիալական էական փոփոխությունների, այլև կարողացել են փոխել իշխող համակարգը: Ամենավերջին օրինակներն են Եգիպտոսը, Ուկրաինան, Սերբիան, Վրաստանը և այլն: Շարժումների աճի պատճառները տարբեր են՝ սոցիալական հիմնախնդիրների ճգնաժամ, քաղաքական համակարգի տապալում, ինչը պետք է ուղղված լիներ ժողովրդավար, համերաշխ բազմակարծիք հասարակության զարգացմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, սոցիալական և մարդկային զարգացմանը: Մարդիկ աստիճանաբար սկսում են հավատալ իրենց ուժին, որ իրենք կարող են գործել, փոխել և պաշտպանել (Զյունս, 2005):



Քննարկում առաջին

Ծրագրի առաջին քննարկմանը հրավիրված էին ակտիվիստներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, լրագրողներ, ովքեր ներգրավված էին բնապահպանական տարբեր շարժումների մեջ: Կլոր-սեղանին քննարկվեցին այնպիսի հարցեր և խնդիրներ, ինչպիսիք են բնապահպանական շարժում – գիտական ինստիտուտներ – քաղաքական կառույցներ համագործակցությունը, մոբիլիզացիայի խնդիրը, տարբեր մակարդակներում բնապահպանական շարժմանը խանգարող գործոնները, ինչպես նաև այն հնարավոր ուղիները, որոնք կնպաստեն շարժման նպատակների իրականացմանը:

Բնապահպանական շարժմանը խոչընդոտող գործոնները կարելի է խմբավորել ըստ մակարդակների կամ ոլորտների: Խոչընդոտների առկայությունը ինչպես բնապահպանական, այնպես էլ ցանկացած սոցիալական շարժման գործընթացում արգելք են հանդիսանում հաջողության հասնելու և շոշափելի արդյունքներ գրանցելու ի դեմս ինստիտուցիոնալ փոփոխությունների:

❖ Քաղաքա-տնտեսական գործոններ.

Քննարկման ընթացքում ներկա ակտիվիստների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից նշվեցին մի շարք քաղաքա-տնտեսական գործոններ, որոնք իրենց բացասական ազդեցությունն են թողնում բնապահպանական շարժման ընթացքի և ինստիտուցիոնալ փոփոխության հասնելու վրա:

- Այդ գործոններից մեկը, գուցե հիմնականը, *Ժողովրդավարական ինստիտուտների դեռևս սաղմնային վիճակում լինելն է*. հասարակությունը ինքնին դուրս է մղված հասարակական քննարկումներից և մասնակցային գործընթացում շատ քիչ դեր է խաղում: Երբ հասարակությունը գործում է այնպիսի ուղղությամբ, որ նպաստում է միայն «արտոնյալ» փոքրամասնության շահերի բավարարմանը, հասարակության մնացած խմբերի մասին մտահոգությունը դառնում է ոչ արդիական: Նման իրավիճակը ստեղծում է բնության շահագործմանը, զանգվածային աղքատությանը նպաստող պայմաններ: Հասարակական լայն զանգվածները, որոնք նպաստում են նման իրավիճակի շարունակականությանը, խթանում են դրա գոյությունը այնքան ժամանակ, մինչև իշխանությունը ընկալվում է նրանց կողմից որպես հասարակական արժեքները և վստահությունը բավարարող և պահպանող: Սա է պատճառը, որ գրեթե բոլոր իշխանական համակարգերը հսկայական միջոցներ են ծախսում լեգիտիմացնելու համար իրենց իշխանությունը և վարած քաղաքականությունը: Այս մեխանիզմը կիրառվում է նաև բնապահպանական խնդիրների վերաբերյալ, երբ այն լայն զանգվածներին ներկայացվում է որպես պայքար «ծառի կամ թփի համար», իսկ ակտիվիստների գործունեությունը անհիմն կամ անլուրջ: Այս հանգամանքը դժվարացնում է ակտիվիստների գործունեությունը, նրանց առաջխաղացումը դեպի որոշումների ընդունման մակարդակ, քանի որ, նախ, գրեթե բացակայում է այն տարածքը, որտեղ նրանք հնարավորություն ունեն ազատ գործունեություն ծավալելու, ինչպես նաև չկա լայն զանգվածների կողմից աջակցություն:

- *Կոռուպցիան և իշխանության չարաշահումը*, որոնք բխում են ժողովրդավարական սկզբունքների բացակայությունից, նույնպես ահռելի դեր են խաղում այս գործընթացում: Համակարգը, որտեղ որոշումներն ընդունվում են հասարակական լսումներին ինքնին հասարակության բացակայության պարագայում, որտեղ անհատին և հասարակությանը քաղաքական մակարդակում ներկայացնող գործիչը ծառայում է առավելապես սեփական շահերին, որտեղ իշխանական դիրքը չարաշահվում է անձնական նպատակներին հասնելու համար, հասարակական շահը դարձնում է ոչ առաջնային: Առավելապես հաճախ արծարծվող խնդիրների շարքում առանձնանում է կոռուպցիայի հսկայական չափը, որ բավական ծանրակշիռ խոչընդոտ է հանդիսանում: Հասարակական տարածքների բռնազավթումը, բնությունը առանձին անհատներին ծառայեցնելու հանգամանքը հաճախ բնապահպանական ոլորտում ընդունվող որոշումների իրական խթանն են հանդիսանում, որտեղ հասարակությունը, որպես այդպիսին որևէ դեր չի խաղում: Շատ բնապահպանական խնդիրներ, որոնք կապված են ջրային պաշարների, հանքարդյունաբերության, անտառների, պահպանվող տարածքների հետ, ասոցացվում են կոռուպցիայի հետ: Բնական ռեսուրսների շահագործման վերաբերյալ հասարակությանը տրամադրվող տեղեկատվությունը խիստ սահմանափակ է (PFA 2010):
- *Տնտեսական զարգացման այլընտրանքների բացակայությունն է:*
Շատ ակտիվիստների կողմից նշվեց տնտեսական աճի և վերջինիս հետ կապված հասարակության սոցիալ-տնտեսական իրա-

վիճակի բարելավման ուղղակի կապի շահարկումը: Մինչդեռ բնապահպանական խնդիրները, որոնք առաջացել են բնությունը «ստրկացնելուց և ծառայեցնելուց», հանգեցնում են բազմաթիվ սոցիալական հիմնախնդիրների սրացմանը՝ ժողովրդագրական բացասական միտումներ, առողջապահական խնդիրներ և այլն: Տնտեսությունը և բնապահպանությունը *հակադրելը* դարձել է գործիք, որը շատ հաճախ շահարկվում է տնտեսական նպատակների հասնելու համար: Այս հակադրությունը արհեստականորեն կառուցված է, այն բնական գործընթաց չէ և դրա շրջանակներում բնապահպանությունը դիտարկվում է որպես ոչ կարևոր, երկրորդական, նույնիսկ խոչընդոտ, որը արգելք է հանդիսանում տնտեսական զարգացմանը և սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

- Քաղաքական կուսակցությունների ոչ ակտիվ ներգրավվածությունը բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը ևս խոչընդոտ է համարվում: Բնապահպանությունը այս մակարդակում ևս, կարծես թե, համարվում է ոչ առաջնային, այնինչ, այն սերտորեն փոխկապակցված է պետության և հասարակության քաղաքա-տնտեսական զարգացման հետ: Քաղաքական կուսակցությունների ներգրավվումը այս գործընթացում կարող է դառնալ բավականին ուժեղ զենք պայքարի հաջողության համար: Այստեղ է, որ հնարավոր է երկխոսություն ծավալել, պահանջել կուսակցություններից ունենալ բնապահպանական հիմնախնդիրներին վերաբերող ծրագրեր, դրանք դնել հանրային քննարկման և հետամուտ լինել, որպեսզի վերջիններս իրագործեն իրենց ծրագրերը: Կարևոր է, որ շարժման ակտիվիստ-

ներն իրենք ստեղծեն այն ազատ ու բաց տարածությունը, որտեղ հնարավոր կլինի կառուցողական դիսկուրս ծավալել:

- Բնապահպանական խնդիրները, որոնք այսօր ծառացած են ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ աշխարհի վրա լիբերալ, նեո-լիբերալ տնտեսական քաղաքականության հետևանք են: Հասարակության լայն զանգվածներին իրազեկելու հարցում էլ, այսօր շատ քիչ, կամ ընդհանրապես չի շոշափվում այս հարցը: Քաղաքական կուսակցությունները, լրատվամիջոցները չեն ներկայացնում խնդիրը գլոբալ տեսանկյունից, իսկ բնապահպանական շարժումն էլ որպես գլոբալ բնապահպանական շարժում՝ ուղղված վարվող տնտեսական քաղաքականությանը:

❁ Մշակութային գործոններ

Մշակութապես ձևավորված արժեքները էական, եթե ոչ որոշիչ, դեր են ունենում ցանկացած շարժման գործունեության մեջ: Բնապահպանական շարժման հիմնական խոչընդոտներից նշվեց տարանջատվածությունը, ոչ համախմբվածությունը: Սակայն, եթե դա նախկինում ավելի ակնհայտ էր, և ակտիվիստները ավելի փոքր էին թվաքանակով, ապա վերջին շրջանում կարծես թե նկատելի փոփոխություններ են արձանագրվում: Հասարակության տարբեր խմբեր, կարծես թե, ձերբազատվում են այն ավանդական մտածելակերպից, ըստ որի նրանք «ունակ չեն քաղաքական մակարդակում որևէ բան փոխելու», նույնիսկ եթե նրանք ակտիվ են և պայքարող: Մտածողության փոփոխությունը, որ երկար ժամանակ է պահանջում և արդյունքում հանգեցնում է երկարատև և կայուն փոփոխության, ցան-

կացած սոցիալական շարժման հիմքն է հանդիսանում: Ակտիվիզմը նաև քանդում է այն կարծրատիպերը, որոնք ձևավորված են և գոյություն ունեն հասարակության մեջ: Այն ստեղծում է ազատ տարածություն, որտեղ կարող է դիսկուրս ծավալվել, որտեղ մարդիկ ազատ են արտահայտելու իրենց կարծիքը որպես ինքնավար քաղաքացիներ: Այս տարածության մեջ էլ ստեղծվում կամ բացահայտվում են այն այլընտրանքները, որոնք կարող են առաջարկվել շարժման կողմից: Այս ազատ և բաց տարածությունը բացահայտում և միաժամանակ ստեղծում է հնարավորություն, որպեսզի հասարակության որոշ խմբեր սկսեն *շարքեր* մտածել և կարողանան հարցեր բարձրաձայնել:

✿ Կրթական գործոններ

Կրթությունը առաջնային դեր է խաղում ցանկացած փոփոխության մեջ: Ազատությունը, ստեղծագործականությունը, քննադատական մտքի զարգացումը այն հիմնական գործոններն են, որոնք փոփոխությունների են հանգեցնում: Անձը պետք է ազատ լինի, որպեսզի կարողանա ստեղծել, բացել նոր հեռանկարներ և առաջ քաշել այլընտրանքներ: Կրթությունը պետք է լինի նաև համագործակցային, ինչը փոփոխության հասնելու էական բաղադրիչ է հանդիսանում: Կրթությունը, որն ուղղված է մարդու զարգացմանը, կարևոր է նաև իրազեկման, արդիականության, պատմության մեջ մեր դերի և իրականության բացահայտման տեսանկյունից: Գործողությունների միջոցով է հնարավոր դառնում հասնել համատեղ փոփոխության: Կրթական փոփոխությունները պետք է ուղղված լինեն ոչ միայն բնապահպանական կամ քաղաքացիական

կրթությունը ուսումնական պլանում ընդգրկելուն, այլև նրան, թե ինչպես են այդ առարկաները դասավանդվում: Կրթական փոփոխությունները պետք է ապահովեն ակտիվ մասնակցություն, քննադատական մտածողության զարգացում, քաղաքական և գաղափարական կառույցների մասին գիտելիքներ: Սկզբունքային է, որ կրթական ծրագիրը կազմված լինի անհատ-համայնք-հասարակություն-բնություն փոխկապվածության գաղափարի հիման վրա, ինչն էլ կձևավորի հոգատար վերաբերմունք և հասարակական ակտիվություն:

Կրթական գործոնի մեջ մասնակիցների կողմից նշվեց ևս մեկ առանցքային կետ: Դա գիտական ոլորտի ներգրավվածությունն է բնապահպանական խնդիրների բացահայտման, հետազոտման, արդյունքների լուսաբանման մեջ: Մասնակիցների կարծիքները տարաձայն էին. մի մասը նշեց համապատասխան մասնագետների պակասը, սակայն մյուսները ընդգծում էին, որ ոլորտում մասնագետների պակաս չկա և արվում են հետազոտություններ: Սակայն հիմնական խնդիրն արդյունքների հասարակայնացման և մասնագետների ազատության հետ է

«**Շատ կարևոր է
համալսարաններում**

մշակել հատուկ

թեմաներ բնապահ-

պանական շարժման

թեմաներով և

ուսումնասիրություն-

ներ իրականացնել:

Քննարկման մասնակից

կապված: Շատ մասնագետներ վախենում են դեմ արտահայտվել իշխող համակարգին, ինչն էլ, իր հերթին, ճնշում է մասնագիտական ազատությունը: Սա պայմանավորված է սոցիալ-տնտեսական պայմաններով (աշխատանքի կորուստ, գործազրկության բարձր մակարդակ, ոլորտում սահմանափակ հնարավորություններ):

Գիտական ոլորտում բնապահպանական խնդիրների ուսումնասիրությունը կարելի է սկսել համալսարանական առաջին իսկ տարիներից՝ անցկացնելով հետազոտություններ, պատրաստելով դիպլոմային աշխատանքներ և թեզեր ոչ միայն բնապահպանական թեմայով, այլև դրանց ու քաղաքացիական շարժումների համադրության համատեքստում:

❁ Իրավական գործոններ

Իրավական գործոնը, որը քննարկման ընթացքում բազում անգամներ նշվեց ակտիվիստների կողմից (մասնավորապես իրավական ոլորտի մասնագետների), կապված էր պայքարի իրավական կողմերի հետ: Հիմնական խնդիրն այս ոլորտում իրավական համակարգի թերություններն են՝ մարդու հիմնարար իրավունքների ոտնահարումը, սահմանադրական կետերի բազմաթիվ խախտումները, արդարության բացակայությունը և, ինչը շատ կարևոր է, իրավական գիտակցության և ոլորտի մասին իրազեկվածության ցածր մակարդակը: Հասարակական լայն զանգվածներ տեղեկացված չեն իրենց գոնե հիմնարար իրավունքների մասին, կրթական ինստիտուտները չեն տրամադրում որակյալ ծրագրեր, որոնք ուղղված են իրավագիտակցության բարձրացմանը:

Հայաստանը ընդունել է մի շարք կոնվենցիաներ, ստորագրել միջազգային տարբեր համաձայնագրեր, որոնք հասցեագրված են այնպիսի խնդիրների, ինչպիսիք են կենսաբազմազանությունը, կլիմայի փոփոխությունը, ինչպես նաև մշակութային և բնական ժառանգության պահպանումը: Ավելին, ՀՀ Սահմանադրությունում նշվում է բնության պաշտպանության և մարդու առողջ ապրելու իրավունքի մասին (Թապիկյան, 2010): Սակայն, իրականում, կառավարությունը գործնական քայլեր չի իրականացնում բնապահպանական այս փաստաթղթերում ամրագրված կետերը կյանքի կոչելու:

❖ **Լրատվամիջոցներ/Ժողովրդավարություն/
խոսքի ազատություն**

Մեդիան կարևոր դեր ունի հասարակության տարբեր խմբերին տեղեկատվություն տրամադրելու, կրթելու, բազմակարծիք տարածություն կառուցելու մեջ: Շատ կարևոր է, որպեսզի հասարակությունը հնարավորություն ունենա մասնակից լինելու բնապահպանական քննարկումներին, արտահայտի իր կարծիքը և տեսանկյունների փոխանակում տեղի ունենա: Սրանք այն կարևոր պայմաններն են, որոնց անհրաժեշտ է հասնել: Սոցիալական /բնապահպանական/ շարժման հաջողության համար կարևոր է տեղեկատվության ոլորտի ազատության հանգամանքը: Տեղեկատվության հասանելիությունը նպաստում է տնտեսական, սոցիալական, քաղաքական զարգացմանը, ինչն էլ իր հերթին խթան է հանդիսանում տարբեր կոնֆլիկտների (այս դեպքում բնապահպանական) լուծմանը: Լրատվամիջոցները ահռելի դեր ունեն բնապահպանա-

Խնդիրը միայն

բնապահպանական

ակտիվիզմը չէ, այլ

քաղաքացիական

ակտիվությունը: Մենք

պետք է իմանանք մեր

իրավունքների մասին

և պայքարենք դրանց

համար:

կան հիմնախնդիրների արծարծման մեջ՝ ձևավորելով մտածողություն և պատասխանատու վերաբերմունք բնության նկատմամբ:

Մասնակիցների կողմից նշվեց նաև լրատվամիջոցների հետ աշխատելու /համագործակցելու ռազմավարության բացակայությունը կամ վերջինիս չմշակված ծրագիրը: Ցանկացած սոցիալական շարժում, լինի դա մարդու իրավունքների պայքար, բնապահպանություն, կարևորվում է լրատվամիջոցների հետ աշխատանքով և հատուկ մշակված քայլերով: Ցավոք, այսօր

Հայաստանում ազատ լրատվամիջոցների սահամանափակությունն իր բացասական ազդեցությունն է ունենում բնապահպանական շարժման առաջընթացի մեջ: Սակայն այլընտրանքային լրատվամիջոցները (ինտերնետ, բլոգ, անկախ լրագրողներ, բնապահպանական խմբեր), այնուամենայնիվ, կարողանում են որոշակի հարթակ կառուցել և ապահովել տեղեկատվության տարածում:

✿ Կազմակերպչական գործոններ

Ցանկացած սոցիալական շարժման հիմնակետը դա ռազմավարությունն է, որն ուղղորդում է շարժումը, գծում վերջինիս

երկարաժամկետ հաջողության ուղին: Ռազմավարության մշակումը հնարավորություն է տալիս ավելի պարզ տեսնել, վերհանել այն կարևոր կետերը, որոնք բնորոշ են տվյալ շարժմանը և համատեքստին՝ լսելի դարձնել ձայնը, համախմբել պոտենցիալ ուժերը, կրթել, ազդեցություն ունենալ որոշումների ընդունման մակարդակում, փոփոխություններ իրականացնել տեղական և պետական քաղաքականության մեջ, հասնել շոշափելի փոփոխությունների:

Սոցիալական շարժումների նպատակը հասարակական արժեքների փոփոխությունն է, այդ արժեքների վրա հիմնված հարաբերությունների վերաճնավորումը, ինչպես նաև քաղաքական, տնտեսական և մշակութային իշխանության կենտրոնացումը դեպի գործողությունների մակարդակ: Այն, ինչ այսօր դեռևս բաց է և պակասում է Հայաստանում ծավալված բնապահպանական շարժմանը, ինչը նաև շատ կարևոր է, դա հստակ ռազմավարություն է: Մշակված գործողությունների շարքը, շարժման ներսում դերերի և ֆունկցիաների բաժանումը էական են, որպեսզի շարժումը հետևողական բնույթ կրի: Հասարակական տարածության բացակայությունը նույնպես խոչընդոտում է շարժման հաջողությանը: Լայն զանգվածների հարմարվողականությունը, հասարակական տարածության թյուր ընկալման խնդիրները, սեփական տարածքի նկատմամբ պատասխանատվության զգացողության բացակայությունը այն գործոններն են, որոնք նույնպես որոշիչ դեր ունեն բնապահպանական շարժման ընթացքում:

Կապեր/ցանցի ստեղծում և համագործակցություն այլ հասարակական կազմակերպությունների հետ, որոնք ունեն նույն նպատակը և գործում են, որպեսզի փոխեն առկա իրավիճակը:

✱ Հոգևոր-աշխարհայացքային գործոններ

Հոգևոր աշխարհայացքային գործոնը նույնպես առանձնացվեց մասնակիցների կողմից: Դա այն արժեքային համակարգն է, աշխարհընկալումը, որն այսօր առկա է մեր հասարակությունում: Կապիտալիզմը, որը իշխում է գրեթե ամբողջ աշխարհում, իր հետևանքներն է թողել և թողնում բնություն-մարդ-հասարակություն փոխհարաբերությունների վրա: Կապիտալը դիտվում է որպես արժեք, գերարժեք և, ինչպես անհատական, այնպես էլ հասարակական և պետական մակարդակում, ուղղորդում կապիտալին՝ որպես գերագույն նպատակին հասնելու ձգտմամբ: Սպառողական հասարակությունը բնությունը օգտագործում է սեփական պահանջմունքները բավարարելու համար՝ առանց գիտակցելու սեփական գործողությունների անդառնալի հետևանքները: Այստեղ կարևորվում է իմպերատիվ գիտելիքը, որը ներառում է մարդու հինգ զգայարանները, որոնք աշխարհընկալման ձևավորման մեջ մեծ դերակատարություն ունեն: Այդ գիտելիքը կարող է արդյունավետորեն օգտագործվել նաև լրատվամիջոցների (մեդիայի) կողմից՝ ցուցահանդեսներ, այլընտրանքային արվեստ, էքսպերիմենտալ արվեստ և այլն:

Կայուն զարգացման, կանաչ տնտեսության հիմքեր ստեղծելու համար առաջնային է մնում կրթությունը, որն ուղղված է բնու-

թյան պահպանությանը: Բնապահպան ակտիվիստները, տիրապետելով համապատասխան գիտելիքի, հնարավորություն ունեն ամենատարբեր դասընթացների, տեղեկատվական ակցիաների, միջոցառումների միջոցով կրթել և տեղեկացնել հասարակական տարբեր խմբերին: Կյանքի որակը և բնապահպանական ակտիվիզմը կախված են այն արժեքային համակարգից, որն իշխում է հասարակությունում: Բնապահպանական հիմնախնդիրների մասին ազատ և բաց տեղեկատվության հասանելիությունը ստեղծում, ձևավորում, փոխանցում է գիտելիք առկա հիմնախնդիրների մասին: Իրենց հերթին, լրատվամիջոցները տեղեկացնում և կրթում են հասարակության լայն շերտերին բնապահպանական հարցերի մասին, որոնք շահարկում են կառավարությունը բնապահպանական քաղաքականության իրականացման ճանապարհին: Շոշափելի հաջողությունների կարելի է հասնել միայն հասարակական բաց և ազատ տարածություն ստեղծելու, պահպանելու և այն նպատակաուղղված օգտագործելու դեպքում, որտեղ շարժման բոլոր շահագրգիռ կողմերը հնարավորություն ունեն արտահայտվելու և կառուցողական դիսկուրս ծավալելու:

Քննարկում երկրորդ

«Հասարակական գործողություններից դեպի ինստիտուցիոնալ փոփոխություններ. բնապահպանական քաղաքականության երկխոսություն» ծրագրի շրջանակներում կազմակերպված երկրորդ կլոր սեղանին մասնակցեցին ինչպես բնապահպան ակտիվիստներ, այնպես էլ ոլորտի փորձագետներ, ՀՀ բնապահպա-

**Եթե ակտիվ չմաս-
նակցենք հասարա-
կական լսումներին,
ցանկացած նախագիծ
կանցնի: Տեղեկատ-
վությունը շատ սահ-
մանափակ է և
գրեթե անհասանելի:**

նության, էներգետիկայի, բնական
պաշարների նախարարություննե-
րի ներկայացուցիչներ: Այս հան-
դիպման նպատակն էր համատեղ
ուժերով ծավալել կառուցողական
քննարկում առկա բնապահպա-
նական հիմնախնդիրների շուրջ:
Քննարկումը հետաքրքիր էր այն-
քանով, որ այն հնարավորություն
տվեց ոչ միայն ներկաներին անդ-
րադառնալ խնդիրներին, այլև ու-
նենալ դաշտ, որտեղ լսելի էին ներ-
կաների կարծիքները: Քննարկման
հիմնական խնդիրն էր պարզաբա-
նել, թե ինչպիսին է բնապահպա-

նական քաղաքականության մշակման գործընթացում կառավա-
րություն-քաղաքացիական հասարակություն համագործակցությու-
նը, ինչպիսի խնդիրներ են առկա և որքանով է հասարակությունն
ընդգրկված մի գործընթացում, որը հասարակության գոյության և
հետագա զարգացման համար առաջնային նշանակություն ունի:

Հիմնական հարցը, որը քննարկվեց կյոբ սեղանի ընթացքում,
դա հասարակության մասնակցության խնդիրն էր որոշումների ըն-
դունման գործընթացներում: Եթե նախկինում ցանկացած որոշման
պատասխանատուն պետությունն էր, մասնավորապես՝ Սովետա-
կան Միությունը, ապա անկախացումից հետո, երբ պետք է հաս-

տատվելին և գործելին ժողովրդավարական ինստիտուտները, այդ ուժը պատկանելու էր ժողովրդին: Մակայն ժողովրդավարության մասնակցային մոդելը այսօր չի գործում, քանի որ չկա դրա համար դաշտ, բացի այդ, դեռևս իր ազդեցությունն ունի նախկին սովետական մշակույթը:

Հասարակական քննարկումներին/լսումներին մասնակից էր հասարակության միայն մի փոքր զանգված՝ բնապահպան-ակտիվիստները, միջդեռ հասարակական լայն զանգվածները դուրս են մասնակցային գործընթացից: Բավականին բարդ և դժվար հասանելի է նաև հասարակական լսումների մասին տեղեկատվությունը, որը գրեթե միշտ ուշ է տեղադրվում համապատասխան նախարարությունների կայքերում կամ տարածվում լրատվամիջոցներով:

Էներգետիկայի նախարարության ներկայացուցիչը քննարկման շրջանակներում ժխտեց ակտիվիստների մասնակցության համար պայմանների բացակայության խնդիրը: Ըստ նրա՝ բնապահպանները ռեալ առաջարկություններ չեն անում, նրանք չեն մասնակցում և ոչինչ չեն ներկայացնում կառավարության նիստերին կամ քննարկումներին:

Մեկ այլ խնդիր, որը նշվեց մասնակիցների կողմից, դա բնապահպանական մոնիտորինգների բացակայությունն է: Գոյություն չունի մոնիտորինգի պլան, ոչ մի գործողություն չի վերահսկվում և գնահատվում: Այս բացը լրացնելու համար քննարկման ժամանակ առաջարկվեց ստեղծել հանրային վերահսկման խորհուրդ:

Աշխատանքները կլինեն կամավորական սկզբունքով՝ հիմքում ունենալով համագործակցության գաղափարը: Խորհուրդը կազմված կլինի տարբեր բնագավառներ ներառող խմբերից, որոնցից յուրաքանչյուրը կգրադվի իր ոլորտի ուսումնասիրություններով՝ համագործակցելով այլ խմբերի հետ: Սա կարող է դառնալ վերահսկման մի համակարգ, որը կգրադվի մոնիտորինգով և հետևողական կլինի կառավարության գործունեությանը:

Այս քննարկման ժամանակ նույնպես հատուկ տեղ հատկացվեց կրթության ինստիտուտին, որը հանդիսանում է անձի սոցիալականացման կարևոր ազնեւներից մեկը և որտեղ, առաջին հերթին, ձևավորվում է քաղաքացին: Բնապահպանական խնդիրները դասագրքերում չեն արծարծվում, էկոկրթական հաղորդաշարերը, որոնք մատչելի կլինեն հասարակության տարբեր խմբերի համար նույնպես բացակայում են:

Առաջարկություններ

- Բնապահպան ակտիվիստները և բնապահպանական կազմակերպությունները պետք է նպաստեն տարբեր ուսումնասիրությունների, հետազոտությունների իրականացմանը,
- Ակտիվիստները պետք է կազմակերպեն կրթական միջոցառումներ, իրազեկվածության բարձրացում բնապահպանական ամենտարբեր հիմնախնդիրների շուրջ՝ ընդգրկելով հասարակության տարբեր խմբեր,
- Յուրաքանչյուր գործողություն իրականացնելիս պետք է առանձնացնել իրենց նպատակային խմբերը և դրանց ուղղված մարտավարությունները,
- Ինքնաբուխ գործողությունները պետք է համադրված լինեն հստակ մշակված ռազմավարական ծրագրի հետ,
- Բնապահպան ակտիվիստները, բնապահպանական կազմակերպությունները պետք է համախմբված լինեն և համագործակցեն միմյանց հետ,
- Քաղաքական կարևոր իրադարձությունները պետք է դառնան նշանակետ, բնապահպանական հիմնախնդիրների մասին քննարկումներ ծավալելու համար,

- Ակտիվիստները պետք է օգտագործեն ցանկացած ազատ պլատֆորմ և կառուցեն շարժման ուժեղ ցանց, իրականացնեն գիտելիքի և փորձի փոխանակում,
- Իրազեկվածության բարձրացման, բնապահպանական կրթական ծրագրերի միջոցով մոբիլիզացնեն հասրաակական տարրեր խմբերին,
- Ոչ տեղեկացված լինելը, բնապահպանական խնդիրներից օտարվածությունը ստեղծում է անորոշության և անտարբերության զգացում: Դա հաղթահարելու համար ակտիվիստները պետք է լինեն որքան հնարավոր է կոնկրետ, ինչպես իրենց գործողությունների, այնպես էլ թիրխային խմբի հետ աշխատելիս,
- Կարևոր է ճկուն լինել, եթե նույնիսկ անհրաժեշտ է երկխոսության գնալ հակադիր կողմերի հետ: Նման քայլը հնարավորություն է տալիս ավելի լավ ճանաչելու իրավիճակը, բացահայտելու նոր մեթոդներ պայքարի հետագա քայլերի վերաբերյալ,
- Հարկավոր է օգտագործել ցանկացած մեղիա ռեսուրս, որը տեղեկատվություն կտարածի շարժման մասին (մասնակցություն տարբեր ծրագրերի, զարգացնել անձնական հարաբերություններ շարժմանը լրագրողներին ներգրավելու համար),
- Մատուցվող տեղեկատվությունը պետք է լինի ինֆորմատիվ, հստակ և փաստարկված: Հաճախ ակտիվիստների «ծայրահեղ»

գործողությունները կարող են հակառակ ազդեցությունն ունենալ հասարակական տարբեր խմբերի վրա, որոնք ակտիվորեն ընդգրկված չեն շարժմանը:

- Ակտիվիստները իրենք պետք է կրթությանն ու իրազեկմանն ուղղված միջոցառումներ մշակեն և կազմակերպեն՝ ընդգրկելով հնարավորինս տարբեր խմբեր (մշակութային միջոցառումներ՝ համերգներ, ցուցահաղեսներ, ֆիլմեր, բլոգերի ստեղծում, սիմվոլիկ ակցիաներ)
- Ակտիվիստները պետք է ոչ թե օտարացած լինեն հասարակությունից այլ դրա մի մասը լինեն՝ ընդգրկելով մյուսներին էլ շարժման մեջ: Նրանք պետք է համագործակցեն հասարակության տարբեր խմբերի հետ:

Վերջաբան

Առկա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ է տեղեկացված, ուժեղ, քաղաքականապես ակտիվ հասարակություն, որը կպահանջի մասնակցություն, արդարություն, անվտանգություն, հավասարություն, խաղաղություն և բնության պաշտպանություն ու պահպանություն:

Սոցիալական շարժումները եղել և այժմ էլ մնում են արդյունավետ միջոց ուղղակիորեն մասնակցելու և հասնելու սոցիալական դրական փոփոխությունների: Հատկապես սա գործում է այն դեպքում, երբ հասարակության մասնակցությունը քաղաքական որոշումներին հասանելի չէ կամ բացակայում է: Կան բազմաթիվ սոցիալական շարժումների օրինակներ, որոնք, հստակ ռազմավարություն ունենալով, հսկայական փոփոխությունների են հասել (1950–60ականներ ԱՄՆ քաղաքացիական իրավունքների պայքար, Բուրմա, 1988, Սերբիա, Հոկտեմբեր 2000, Թռչկան, Հայաստան): Այլ հարց է, թե ինչպես և ինչքանով են լուսաբանվում այդ շարժումները, և որքանով են հասարակական լայն զանգվածները տեղեկացված այդ շարժումների և վերջիններիս հաջողությունների մասին:

Սոցիալական շարժումները հիմնված են ժողովրդավարության, սոցիալական արդարության, քաղաքացիական իրավունքների ազատության և անվտանգության արժեքների վրա: Այդ շարժումները շատ հաճախ ընդգրկում են հասարակության փոքր զանգվածներ կամ առանձին խմբեր: Շարժման հաջողության հա-

մար շատ կարևոր է, որպեսզի երկխոսություն ծավալվի ոչ միայն շարժման ակտիվիստների և իշխանության միջև, այլև ակտիվիստների և հասարակության տարբեր խմբերի միջև: Անհրաժեշտ է, որպեսզի շարժման ակտիվիստները կարողանան ընդգրկել հասարակության մեծամասնությանը՝ տեղեկացնելով և կրթելով մարդկանց իրական խնդիրների, դրանց վտանգների մասին և ներկայացնելով այն իրական արժեքները, որոնց նրանք հետևում են:

Ինչպես արդեն նշվեց, շարժման հաջողության համար կարևոր է նաև իշխանական կառույցների հետ երկխոսություն ծավալելը: Տիրապետելով քաղաքական, տնտեսական լծակների՝ իշխող փոքրամասնությունը օգտագործում է այն ի նպաստ հենց նույն փոքրամասնության շահերի համար և շարժման ակտիվացման դեպքում էլ պատրաստ է ամեն ինչի, որպեսզի կարողանա պաշտպանել այդ իշխանությունը: Ակտիվիստները այստեղ կարող են օգտագործել իրենց ճկունությունը, գտնել այլընտրանքներ, որոնք հնարավոր կդարձնեն համագործակցության կառուցողական ուղիներ փնտրել: Նրանք, իրենց հերթին, պետք է բաց լինեն ներգրավվելու քաղաքական տարբեր ուժերի շարքերը, հստակ պահանջներ ներկայացնեն վերջիններիս, մասնակից լինեն այդ պահանջների իրագործմանը և ծրագրերի մշակմանը:

Եթե մի քանի տարի առաջ Հայաստանում սոցիալական շարժումները ավելի փոքր մասշտաբների էին, ապա այսօր դրանք ավելի ակտիվ են և նպատակաուղղված: Ձևավորվել են խմբեր, որոնք ակտիվորեն ընդգրկված են և շարժվում են իրենց կանոն-

ներով, պարտադրում, ստիպում, որպեսզի իրենց ճայնը լսելի լինի (օրինակ՝ Թռչկանի նախաձեռնությունը, Մաշտոցի պուրակը): Մա այն դեպքն էր, երբ տեսանելի դարձավ քաղաքացու ուժը, երբ լայն զանգվածները տեղեկացան խնդրի մասին և շոշափելի փոփոխություններ կատարվեցին (Թռչկանի ջրվեժ՝ որպես հատուկ պահպանվող տարածք): Հարկավոր է հաշվի առնել նաև էական մի հանգամանք. փոփոխության հասնելը, երբ խոսքը գնում է համակարգային փոփոխության մասին, բավականին ժամանակ է պահանջում: Սոցիալական շարժման, մասնավորապես՝ բնապահպանական շարժման, ռազմավարությունը պետք է լինի մշակված քայլ առ քայլ՝ հաշվի առնելով բոլոր ռիսկերն ու հնարավորությունները, ընգգրկել բոլոր հնարավոր կողմերին: Ակտիվիստները պետք է ուսումնասիրեն և գնահատեն այն համատեքստը, որտեղ գործում են, հասկանան, թե ինչպես է շարժումը առաջ գնում, ինչ հաջողությունների է հասել և որոնք են բացթողումները: Պետք է հաշվի առնել, որ ցանկացած փոքր թվացող հաջողություն տանում է դեպի ավելի մեծին և չդիտարկել այն որպես ոչ էական:

Լավ մշակված ծրագիրը հնարավորություն է տալիս էական փոփոխությունների հասնել՝ առաջին հերթին փոխակերպելով տիրող սոցիալական անարդար իրավիճակը: Անհրաժեշտ է մանրամասնորեն ուսումնասիրել իրավիճակը, պատճառները և դրա հետևանքները, ապա ընտրել կոնկրետ նպատակ և փորձել երկխոսություն ծավալել հակառակ կողմի հետ: Կարևոր է, որպեսզի հասարակական լայն զանգվածները տեղեկացված լինեն (ոչ ֆորմալ բնապահպանական ծրագրեր, հասարակության իրազեկվածության բարձ-

րացում տարբեր գիտական, մշակութային ծրագրերի միջոցով) և միանա՞ն շարժմանը: Սա նույնպես երկարատև գործընթաց է, եթե հաշվի առնենք զանգվածային լրատվամիջոցների սահմանափակ հնարավորությունները հենց բնապահպանական շարժման լուսաբանման տեսանկյունից: Հնարավոր է կազմակերպել կրթական/տեղեկատվական միջոցառումներ: Դրանք ավելի արդյունավետ կազմակերպելու համար ընդգրկել տեղական ուժեր և օգտագործել այն ստեղծագործ ներուժը, որն առկա է շարժման մեջ:

Կրթությունը, երկխոսությունը և գործողությունը համատեղ կարող են ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի շարժումը հաջողության հասնի: Հասարակական գիտակցության բարձրացումը, երբ լայն շերտեր կգիտակցեն և կընդունեն այն, որ բնապահպանական խնդիրներն անքակտելիորեն կապված են երկրի ապագայի, վերջինիս քաղաքական, տնտեսական, մշակութային և մարդկային զարգացման հետ, կնպաստի բնապահպանական շարժման հաջողություններին և հասարակությունն ինքնին պահանջ կներկայացնի և կմասնակցի որոշումների ընդունման և քաղաքականության մշակման գործընթացներին՝ ավելի հետևողական լինելով և գնահատելով դրանց հետագա իրագործումը:

Գրականություն

1. FREIRE, PAULO (1972) Pedagogy of the Oppressed, New York, Continuum.
2. LUTHER KING M, Jr. (1963) Letter From Birmingham Jail, http://web.cn.edu/kwheeler/documents/Letter_Birmingham_Jail.pdf
3. POLICY FORUM ARMENIA “The State of Armenian` s Environment” 2010, http://www.pf-armenia.org/fileadmin/pfa_uploads/PFA_Environmental_Report.pdf
4. TASLAKYAN, L., (2010) “Armenia in International Environmental Conventions,” Armenian Review 52 No. 1-2, Spring-Summer.
5. ZUNES, S (2005) Recognizing the Power of Nonviolent Action, Foreign Policy in Focus, March 31, 2005, www.fpif.org

Ուսումնասիրության հեղինակ՝ Գոհար Ղանդիլյան

